

բուժեան մէջ էր Հոռոմի հետ Տիգրանակերտի արքեպիսկոպոսը Յովհաննէս Ուռհայեցի : Այս շարժման դէմ կանգնեցաւ Գրիգոր Կեսարացի, Կ. Պոլսոյ պատրիարքը († 1635) :

Որչափ ալ զանազան էին տրամադրութիւնները ազգայնոց քով, բայց եւ այնպէս Ազգին քաղաքական եւ տնտեսական պայմանները կը ստիպէին Ազգին առաջնորդները ունենալ Արեւմուտքի հետ բարեկամական կապ : Մասնաւորապէս Արեւմուտքի հետ առևտրական յարաբերութեան մէջ ապրող հայ վաճառականները — յանուանէ Ջուղայեցիները, որոնք անհրաժեշտ կը տեսնէին արեւելեան եւ արեւմտեան նաւահանգիստներու մէջ յենարաններ ունենալ քահանայապետական հովանաւորութեան տակ :

Ինչպէս կ'երեւայ, անոնց դրդումներու վրայ զիմեց Մեւքիսեղեկ կաթողիկոս 1602ին Կղեմէս Ը. Քահանայապետին, խնդրելու անոր պաշտպանութիւնը ի նպաստ հայ ժողովրդեան եւ վաճառականներու : Թղթատարն է Յովհաննէս Ղոփուզենց, Տերգնոյ եպիսկոպոսը. սա, որ յայտնի անձնաւորութիւն մըն էր Հոռոմ, կ'երեւայ թէ ուղեւորած էր Երեւան-Ջուղայ. եւ հոն ծանօթացած Կաթողիկոսին : Մեւքիսեղեկի թուղթը չունիմ առ ձեռն. անոր բովանդակութեան ամփոփումը տուած է Կղեմէս Ը. իւր առ Փիլիպպոս թագաւորն Սպանիոյ դրած հետեւեալ գրութեան մէջ, զոր թարգմանաբար կը ներկայացնեմ :